

ԾՐԱԳԻՐ

«Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում շրջանառող մանրէների ախտահանիչ նյութերի նկատմամբ զգայունության որոշման»

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Վերջին տարիների ընթացքում բժշկական միջամտություններով պայմանավորված վարակները գլոբալ խնդիր են ինչպես զարգացող, այնպես էլ զարգացած երկրներում: Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների, աշխարհում 100 պացիենտից 7-ը զարգացած և 15-ը՝ զարգացող երկրներում բժշկական օգնություն և սպասարկում ստանալու ընթացքում ձեռք են բերում բժշկական միջամտությունով պայմանավորված վարակներ:

2.Հայաստանի Հանրապետությունում 2016 թվականին 2015 թվականի համեմատ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների (այսուհետ՝ ԲԿ) կողմից արձանագրված և հաղորդված ներհիվանդանոցային վարակների դեպքերի թիվն աճել է 35%-ով: 2017-2018 թվականների ընթացքում ԲԿ-ներում իրականացվել են մշտադիտարկումներ, որոնց ընթացքում շրջակա միջավայրի մանրէաբանական լաբորատոր հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ նշված կազմակերպություններում առկա են հոսպիտալային շրջանառող մանրէներ:

3.Բժշկական միջամտություններով պայմանավորված վարակների հարուցիչներ են՝ ախտածին և պայմանական ախտածին մանրէները, այդ թվում ստաֆիլոկոկը, ստրեպտոկոկը, կապտաթարախածին մանրէն, սալմոնելան, շիգելան, աղիքային ցուպիկը, կլեբսիելա, պրոտեյնները և այլն: Վարակի աղբյուր են հանդիսանում հիվանդները և վարակակիրները, ինչպես նաև բժշկական անձնակազմը, որոնք կարող են վարակվել մասնագիտական պարտականությունները կատարելիս:

4.ԲԿ-ներում շրջանառող մանրէները տվյալ կազմակերպությունում երկարատև նույն ախտահանիչ նյութի կիրառման ժամանակ կարող են ձեռք բերել կայունություն: Նույն ախտահանիչ միջոցները երկարատև կիրառելիս կարող են նպաստել հոսպիտալային շտամների կայունություն ձեռք բերմանը կիրառվող ախտահանիչ միջոցների նկատմամբ:

5.Շրջակա միջավայրի առարկաների, ինչպես նաև օդի բաղարկումը հոսպիտալային շտամներով, բարենպաստ պայմաններ են ստեղծում վարակի անարգել փոխանցման համար:

6.ԲԿ-ներում շրջակա միջավայրի բաղադրումը կարող է պայմանավորված լինել ախտահանիչ նյութերի աշխատանքային լուծույթի՝ դրանց կից մեթոդական ուղեցույցում սահմանված ռեժիմների խախտումներով պատրաստմամբ, դրանց ոչ նպատակային օգտագործմամբ, ինչպես նաև դրանց պահպանման կանոնների խախտումներով:

7.Ախտահանիչ նյութերի անվերահսկելի օգտագործումը կարող է առաջացնել ախտածին մանրէների մուտացիա, որի շնորհիվ կայուն շտամներ են առաջանում ախտահանիչ նյութերի նկատմամբ: Մանրէները փոխում են իրենց գենետիկ հատկությունները և ձեռք են բերում նոր հատկություններ, որոնք բնորոշ չեն մայրական բջջին և այդ հատկությունները թույլ են տալիս նրանց երկարաժամկետ գոյատևել ԲԿ-ների պայմաններում:

8.Նկատի ունենալով մանրէների հատկությունների փոփոխականությունը, անհրաժեշտ է մշտապես ուսումնասիրել ԲԿ-ում շրջանառող մանրէները, պարզաբանելով նրանց զգայունությունը ախտահանիչների նկատմամբ՝ անհրաժեշտության դեպքում ախտահանիչ նյութերը փոխարինելու և տվյալ կազմակերպությունում շրջանառող շտամների նկատմամբ առավել զգայուն նյութեր օգտագործելու համար:

II. ՆՊԱՏԱԿԸ

9. Ծրագրի նպատակն է՝ ուսումնասիրել ԲԿ-ում շրջանառող մանրէները և դրանց զգայունությունը տվյալ կազմակերպությունում կիրառվող ախտահանիչ նյութերի նկատմամբ:

III. ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

10. ԲԿ-ներում ախտահանիչ նյութերի, դրանց կից մեթոդական ուղեցույցներին համապատասխան օգտագործման ուսումնասիրություն:

11. ԲԿ-ում շրջանառող մանրէների հայտնաբերում:

12. ԲԿ-ում հայտնաբերված մանրէների զգայունության որոշում ախտահանիչ նյութերի նկատմամբ:

13.Ուսումնասիրության արդյունքների վերլուծություն, խնդիրների վեր հանում:

14.Վեր հանված խնդիրների հիման վրա ախտահանիչ նյութի տվյալ կազմակերպությունում փոխարինման անհրաժեշտության վերաբերյալ առաջարկությունների մշակում և ներկայացում ԲԿ-ներին:

IV. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

15.Ընտրված 5 ԲԿ-ում Հայաստանի հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Ազգային կենտրոն) մասնագետը իրականացնում է հարցախույզ վարակի հսկողության կամ ախտահանիչ նյութերի պատրաստման պատասխանատուի հետ՝ համաձայն գործիք- հարցաշարի:

16.Ազգային կենտրոնի «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղի կողմից կատարվում է նմուշառում ԲԿ-ներում կիրառվող ախտահանիչ նյութի մայր լուծույթից և աշխատանքային լուծույթից:

17.ԲԿ-ներում ախտահանման որակի վացուկների նմուշառումն իրականացվում է վերակենդանացման բաժանմունքի, վիրահատարանների և վիրակապարանների շրջակա միջավայրի մակերեսներից (վիրահատական սեղան, սպասարկման սեղան, պատուհանագոգեր, պատուհանի բռնակներ, դռներ, դռների բռնակներ, ծորակներ, բժշկական իրեր և գործիքներ, դեղորայքի և վիրակապների պահարաններ և այլն)՝ շուրջ 2000 վացուկ:

18.ԲԿ-ները Ազգային կենտրոնի «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղին տրամադրում են ներքին լաբորատոր հսկողություն իրականացնելու ընթացքում անջատված մանրէների շտամները:

19. Նմուշառումը և նմուշների տեղափոխումն իրականացվում է՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 3780 – Ա հրամանների պահանջների (Հետազոտություն ծրագիր ԶԵՎ 1, ԶԵՎ 2):

20. «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղի մանրէաբանական լաբորատորիայում բժիշկ-մանրէաբանի կողմից կատարվում է վացուկների մանրէաբանական հետազոտություն՝ ախտածին և պայմանական ախտածին մանրէների որոշման նպատակով: Մանրէների հայտնաբերումն իրականացվում է նմուշառման միկրոկենսաբանական հետազոտման գործողությունների ստանդարտ ընթացակարգերով՝ ներքոհիշյալ մանրէների տեսակները հայտնաբերելու ուղղությամբ՝

- 1) Ստրեպտոկոկ (*Streptococcus pneumoniae* STRPNE),
- 2) Ոսկեգույն ստաֆիլակոկ (*Staphylococcus aureus* STAAUR),
- 3) Էնտերոկոկ (*Enterococcus faecalis* ENCFAE),
- 4) Էնտերոկոկ (*Enterococcus faecium* ENCFAI),
- 5) Աղիքային ցուպիկ (*Escherichia coli* ESCCOL),

- 6) Կլեբսիլլա (*Klebsiella pneumoniae* KLEPNE),
- 7) Կապտաթարախային ցուպիկ (*Pseudomonas aeruginosa* PSEAER),
- 8) Ացինետոբակտեր (*Acinetobacter* species)

21.ԲԿ-ներում շրջակա միջավայրի ախտահանման որակի վնասումներից անջատված մանրէների, ինչպես նաև ներքին լաբորատոր հսկողություն իրականացնելու ընթացքում անջատված մանրէների զգայունությունը նույն կազմակերպությունում օգտագործվող ախտահանիչ նյութերի նկատմամբ, իրականացվում է բատիստային թեստ-օբյեկտների մեթոդով: Հետազոտության արդյունքները, թույլ են տալիս հայտնաբերել տվյալ ԲԿ-ում շրջանառող ներհիվանդանոցային շտամները, որոնք կայունություն են ձեռք բերել օգտագործվող ախտահանիչ նյութի նկատմամբ:

22.Կատարվում է ԲԿ-ներից բերված ախտահանիչ նյութերի լուծույթների պատրաստում՝ համաձայն դրանց մեթոդական ուղեցույցների: Կայուն շտամների հայտնաբերման դեպքում իրականացվում է դրանց զգայունության որոշում պատրաստված լուծույթի հանդեպ:

V. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

23.Թվով 5 պարեկ ԲԿ-ում ախտահանիչ նյութերի կիրառման և դրանց նկատմամբ մանրէների զգայունության որոշման ուսումնասիրություն՝ գործիք-հարցաշարով:

24. ԲԿ-ներում մանրէաբանական լաբորատորիայի լաբորատոր ներքին հսկողության արդյունքների, շրջակա միջավայրի մակերեսներից անջատված շտամների, դրանց ախտահանիչ նյութերի նկատմամբ զգայունության որոշման արդյունքների ուսումնասիրություն:

25.Շրջակա միջավայրի մակերեսներից ախտահանման որակի, վնասումների լաբորատոր հետազոտությունների իրականացում՝ շրջանառող շտամների որոշում: Լաբորատոր հետազոտությունների ծավալը որոշվում է ուսումնասիրության ընթացքում՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի պահանջների:

26.Անջատված շտամների ախտահանիչ նյութերի նկատմամբ զգայունության որոշում:

27. ԲԿ-ներում ներքին լաբորատոր հսկողություն իրականացնելու ընթացքում անջատված շտամների տվյալ ԲԿ-ում օգտագործվող ախտահանիչ նյութերի նկատմամբ զգայունության որոշում:

28. Ծրագրի արդյունքների հիման վրա էլեկտրոնային բազայի ստեղծում EXELL համակարգչային ծրագրով:

29. Ծրագրի արդյունքների վերլուծություն, ախտահանիչ նյութերի փոխարինման անհրաժեշտության վերաբերյալ առաջարկությունների մշակում և ներկայացում ԲԿ-ին:

30. Հետազոտության հիման վրա իրականացվում է արդյունքների վերլուծություն և առաջարկությունների մշակում՝ ախտահանիչ նյութերը փոխարինելու վերաբերյալ:

31. Հետազոտությունների արդյունքների հրապարակում:

32. Ծրագրի ֆինանսավորումը իրականացվում է համաձայն սույն հրամանի հավելված 5-ի:

VI. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

33. Ծրագրի ակնկալվող արդյունքներն են՝

- 1) ԲԿ-ում շրջակա միջավայրի մակերեսներից անջատված հարուցիչների զգայունության որոշում տվյալ կազմակերպությունում օգտագործվող ախտահանիչ միջոցների նկատմամբ և այդ նյութերի նկատմամբ կայուն շտամների բացահայտման դեպքում ախտահանիչ նյութի փոխարինման վերաբերյալ առաջարկությունների մշակում և ներկայացում ԲԿ-ին:
- 2) Բացահայտել հոսպիտալային շտամների ախտահանիչ նյութերի նկատմամբ կայունության միտումները և մշակել առաջարկություններ ախտահանիչ նյութերի նպատակային կիրառման, ինչպես նաև դրանց նկատմամբ հոսպիտալային շտամների կայունության կանխարգելման ուղղությամբ:

Ֆինանսավորումը՝ պետական բյուջե

ԳՈՐԾԻՔ-ՀԱՐՑԱՇԱՐ

«ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՇՐՋԱՆԱԹՈՂ ՄԱՆՐԷՆԵՐԻ ԱԽՏԱՀԱՆԻՉ ՆՅՈՒԹԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԶԳԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ»

1. Հետազոտության ամսաթիվը _____
2. Բժշկական կազմակերպության անվանումը _____
3. Պատասխանատու անձի անուն, ազգանունը _____
4. Ինչպիսի՞ ախտահանիչ նյութեր են օգտագործվում ԲԿ-ում (լրացնել կից ձևաչափը)

	Հարց	ԱՅՈ (նշել անվա- նումները)	Ոչ
1.	Ինչպիսի՞ ախտահանիչ նյութեր են օգտագործվում ԲԿ-ում		
	Քլոր պարունակող նյութեր		
	Պերօքսիդներ – թթվածնի հիմքով		
	Ալդեհիդի հիմքով նյութեր		
	Ամոնիումի հիմքով նյութեր		
	Սպիրտներ		
2.	Առկա ԲԿ-ում ախտահանիչ նյութերին կից մեթոդական հրահանգը՝ հաստատված ՀՀ առողջապահության նախարարի հրամանով		
3.	Առկա է արդյոք ԲԿ-ի տնօրենի հրամանով նշանակված պատասխանատու ախտահանիչ նյութերի պատրաստման համար		
4.	Իրականացվում է արդյոք սանիտարամանրէաբանական ներքին լաբորատոր հսկողություն		
5.	ա. Պլանային՝ ամսական կտրվածքով		
6.	բ. Համաճարակաբանական ցուցումով		

7.	2018 թվականին սանիտարամանրէաբանական հսկողության նպատակով վերցված նմուշների քանակ / շեղումների քանակ		
8.	ա. Աղիքային ցուպիկի խմբի մանրէների վերաբերյալ շրջակա միջավայրի վնասում		
9.	բ.Ախտահանման որակի վերաբերյալ շրջակա միջավայրի վնասում		
10.	գ. Մակարուծաբանական հետազոտության վերաբերյալ վնասում		
11.	դ. Բժշկական իրերի մանրէազերծման որակի վերաբերյալ վնասում		
12.	ե. Օդի մանրէաբանական հետազոտության քանակ		

